

**Ի՞նչ է ԽՈՒՍԱՓՈՒՄԸ ըստ
Կալիֆոռնիայի Կրթական Օրենքի:**

Կ.Օ. 48260 – ԽՈՒՍԱՓՄԱՆ ՄԱՀՄԱՆՈՒՄ
Պարտադիր կրթության կամ պարտադիր շարունակական կրթության ենթակա աշակերտը , որը բացակայել է դպրոցից, ուսումնական տարվա ընթացքում, առանց վավեր պատճառի, 3 օր կամ ուշացել է կամ բացակայել է 30 րոպե առանց պատճառի 3 անգամ կամ էլ այս բոլորը միասին, պետք է համարվի դասից խուսափող և հայնսովի հաճախման վարիչին կամ դպրոցի շրջանի գերատեսչին:

Կ. Օ. 48260.5 –ԾՆՈՂԻ ԾԱՆՈՒՑՈՒՄ
Օրենքը պահանջում է տեղեկացնել ծնողին, եթե երեխան խուսափում է դասի գալուց: Այդ նամակները տուն են ուղարկվում ամիսը մեկ անգամ դպրոցի գրասենյակի կողմից:

Կ.Օ. 48261 – ԽՈՒՍԱՓՄԱՆ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ
Այն աշակերտները, ովքեր անընդհատ խուսափում են դասի ներկայանալուց և մի քանի օր բացակայում կամ ուշանում են դասից, պետք է զեկուցվեն, որպես խուսափողներ հաճախումների գծով վարիչին կամ շրջանի գերատեսչին:

Կ.Օ. 48262 – ԽՈՒՍԱՓՄԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹ
Աշակերտը սովորության խուսափող է ճանաչվում, եթե նա 3 օր կամ ավելի խուսափել է դասի ներկայանալ ուսումնական տարվա ընթացքում, համարելով, որ շրջանի համապատասխան աշխատակիցը փորձել է գոնե մեկ անգամ խոսել ծնողի կամ պահապանի հետ, կամ աշակերտի հետ, լրացնելով զեկուցումները, որոնք պահանջվում են մաս 48261-ի մաս 48260-ի կողմից:

ԴՊՐՈՑ ՀԱՃԱԽԵԼՆ ՕՐԵՆՔ Է:

**ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՆԱՀԱՆԳ
Պարտադիր ուսուցում**

Կրթական օրենք 48200

6-ից 18 տարեկան բոլոր երեխաները, չբավարարելով սույն գլխի դրույթները, պետք է լրիվ դրույթով դպրոց հաճախեն: **Յուրաքանչյուր ծնող, պահապան կամ աշակերտին խնամող անձ, պետք է երեխային դպրոց կամ շարունակական կամ այլ դասերի ուղարկի:**

Լոս Անջելեսի Քաղաքային Կոդ 45.04

Անչափահասներին արգելվում է թափառել դպրոցը բաց օրերի և ժամերի ընթացքում, երբ նրանք պետք է դպրոցում լինեն:



*Կալիֆոռնիայի դպրոց հաճախելու օրենքների մասին հավելյալ տեղեկությունների համար հյուրընկալել հետևյալ կայքէջը.
<http://www.cde.ca.gov/ls/ai/tr>*



**Բրբենքի Դպրոցների Միացյալ
Շրջան**

Դպրոցի հաճախում

Ուղեցույց ծնողների համար

**ԲԴՄՇ-ն ակնկալում է, որ բոլոր
աշակերտները ունենան 96.50% կամ
ավելի բարձր դպրոցի հաճախում:**



**Ստալսի Քաջման,
Ուսանողական Ծառայությունների վարիչ
Հեկտոր Գարսիա, SARB-ի փոխ-նախագահ**

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՔՈՒՄ Է ԸՆԿԱՏ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՀԱՃԱՄՈՒՄԸ:

- Կրթական հաջողություն
- Ուժեղ կապ դպրոցի և համայնքի միջև
- Ընկերակցական ամուր կապ
- Ավելի ամուր սոցիալ հուզական հմտություններ
- Լրացուցիչ գիտելիք և փորձ քուլեջի և համալսարանի ծրագրերի համար
- Բարելավված ինքնագնահատական
- Բազմազանություն զգալու հնարավորություններ

ԻՆՉՊԵՄ ԿԱՐՈՂ ԵՆ ԾՆՈՂՆԵՐՆ ԱՋԱԿՑԵԼ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՀԱՃԱՄՄԱՆԸ:

- Երեխաները պետք է լավ քնեն և ուտեն սննդարար նախաճաշ:
- Օգնել երեխային դրականորեն տրամադրվել դպրոցի, ուսման հանդեպ և քաջալերել նրանց մասնակցել դպրոցի միջոցառումներին:
- Բացատրել օրենքը – ըստ օրենքի բոլոր երեխաները պետք է դպրոց հաճախեն ամեն օր:
- Բացատրել դպրոցի օգուտը և բացակայության հետևանքները:
- Համակարգ ստեղծել (այլընտրանքային ծրագիր դպրոց գնալ գալու համար)
- Երևացող տեղում տեղադրել դպրոցի օրացույցը, հաճախման օրենքները և դասացուցակը:
- Դպրոցին տեղյակ պահել, երեխայի բացակայության դրդապատճառների մասին:
- Համոզվեք, որ դպրոցն ունի ձեր հեռախոսի համարը և էլեկտրոնային փոստի հասցեն:

Տեղյակ պահել դպրոցին երեխայի խրոնիկ հիվանդությունների մասին, որոնք բացակայության պատճառ են հանդիսանում:

ԿՐՃԱՏԵԼ ԿՐԹԱԿԱՆ ԺԱՄԻ ԿՈՐՈՒՍՏԸ

- Ընտանեկան արձակուրդներ վերցնել դպրոցը փակ օրերին
- Ոչ արտակարգ պայմաններում բժշկական կամ ատամնաբույժի ժամադրությունները վերցնել դասերից հետո, շաբաթվա վերջին կամ արձակուրդի օրերին
- Եթե երեխան պետք է բժշկի գնա դասերի ընթացքում, ապա պետք է առավոտյան գա դպրոց, հետո գնա բժշիկ և վերադառնա դպրոց ուսումնական օրն ավարտելու համար:
- Կապ պահպանել ուսուցչի հետ և պահանջել լրացնել բաց թողած առաջադրանքները:

Օտոդները պետք է գրություն ներկայացնեն յուրաքանչյուր բացակայության, ուշացման և շուտ տուն գնալու համար 3 օրվա ընթացքում:

Շրջանի օրենքի համաձայն բոլոր բացակայությունները, ուշացումները կամ շուտ տուն գնալը պետք է ապացուցվի բավարարող բացատրությամբ (գրավոր կամ բանավոր):

Հարգելի բացակայության գրությունը կընդունվի մինչև 4 օր բացակայելու դեպքում, եթե երեխան հիվանդ է եղել: Եթե հիվանդության պատճառով բացակայությունը տևել է 5 օր կամ ավելի պետք է խոսել դպրոցի բուժքոչը հետ: Բուժքոչը կամ նրան փոխարինողը պետք է երեխային թույլ տա հետ վերադառնալ դպրոց: Խնդրում ենք նկատի ունենալ, որ մեկուսացման կանոնները հաստատվում են հանրային առողջապահության գրասենյակի կողմից. http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/docs/protocols/ExposureManagementPlan_K12Schools.pdf

Եթե ծնողը չափից ավելի շատ չպատճառաբանված գրություններ ներկայացնի դպրոցին, ապա վերջինս կարող է բժշկի թուղթ պահանջել ապագա բացակայությունների համար:

Կալիֆոռնիայի կանոնակարգ Տիտղոս 5, մաս 306 – Դպրոցի տնօրենը կամ ուսուցիչը կարող է բավարարող բացատրություն պահանջել ծնողից կամ պահապանից, անձամբ կամ գրավոր, երեխայի բացակայության, ուշացման կամ շուտ տուն գնալու պարագայում:

Հարգելի բացակայություններ (Կալիֆոռնիայի Կ. Օ. 48205)

Պատճառ #1 – աշակերտի հաճախման գրառում

- Հիվանդության պատճառով
- Գավառի կամ քաղաքի առողջապահական մարմինների կողմից հայտարարված կարանտինի դեպքում
- Բժշկի, ատամնաբույժի, աչքի կամ ոսկրի բժշկի ծառայություններ ստանալիս
- Ընտանիքի անդամի թաղման ժամանակ
 - Կալիֆոռնիայում - 1 օր
 - Կալիֆոռնիայից դուրս - 3 օր
- Ժյուրի պարտականության դեպքում
- Եթե աշակերտը պահառու ծնող է և պետք է երեխային բժշկի տանի կամ երեխան հիվանդ է:

Պատճառ #5 – Դպրոցի տնօրենի նախնական թույլտվությամբ*

- Արդարացված անհատական պատճառներով, ներառյալ, բայց չսահմանափակվելով, դատարանում ներկայանալու, թաղման մասնակցելու, թույլատրվելի օրերից բացի, կրոնական արարողությունների, աշխատանքային կոնֆերանսի մասնակցելու համար պետք է **ծնողը նախապես խնդրի տնօրենի գրավոր թույլտվությունը:**
- Ընտրական օրենսգրքի 12302 բաժնի համաձայն, եթե աշակերտը ծառայելու է ընտրական տեղամասում ծնող պետք է **նախապես տնօրենի գրավոր թույլտվությունը խնդրի**, եթե երեխան պատկանում է կրոնական խմբի, որի տոները համընկնում են դպրոցական օրերի հետ: [կրթական օրենսգրքի բաժին 48205 (ա)(7)]: Դրանից բացի, աշակերտը կարող է կրոնական տոնի մասնակցել 4 ժամ կիսամյակի ընթացքում [կրթական օրենսգրքի բաժին 48205 (գ)]:

***Խնդրում ենք նշել, որ վերոհիշյալ բացակայությունների պատճառով երեխան դպրոցից խուսափման նամակ չի ստանա:**